Հաստատված է«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի Խորհրդի կողմից
(Արձանագրություն թիվ 10 առ 01.10.2009թ.)

ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՀԱՆԴԵՊ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն պայմանները մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի» և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.2. «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն (այսուհետ՝ Ապահովագրող) իրականացնում է երրորդ անձանց հանդեպ քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ընդհանուր պատասխանատվության ապահովագրության դասով.

1.3. Սույն պայմաններով կիրառվող հիմնական հասկացությունները

Ապահովագրության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) - Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնություն, որի գործողության ընթացքում Ապահովագրողը պարտավոր է ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում (բացառությամբ սույն Պայմաններում նախատեսված բացառությունների) ապահովագրական գումարի սահմաններում հատուցում վճարել Ապահովադրին (կամ Շահառուին), իսկ Ապահովադիրը պետք է վճարի ապահովագրության պայմանագրում հաշվարկված ապահովագրավճարը նշված չափով, կարգով և ժամկետներում;

Ապահովագրող - «Սիլ Ինշուրանս» Ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ նաև Ընկերություն), որն իրականացնում է ապահովագրական գործնեություն և օրենքով նախատեսված այլ գործունեություն համաձայն լիազորված մարմնի կողմից տրված լիցենզիայի:

Ապահովադիր - օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձ, օտարերկրյա կազմակերպություն, ֆիզիկական անձ:

Շահառու - ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում ապահովագրական Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ:

Ապահովագրված անձ - անձ, որի հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է Պայմանագրի առարկա:

Ապահովագրության օբյեկտ - ապահովագրման ենթակա գույքային շահերը:

Ապահովագրական ռիսկ - ապահովագրման ենթակա հնարավոր պատահար, որը կարող է տեղի ունենալ պայմանագրի գործողության ընթացքում, որը կրում է հանկարծակի և պատահական բնույթ:

Ապահովագրական պատահարը - պատահար, որի ի հայտ գալու դեպքում (բացառությամբ սույն Պայմաններում նախատեսված դեպքերի) Ապահովագրողը պարտավորվում է վճարել Ապահովադրին կամ Շահառուին ապահովագրական հատուցում սույն պայմաններում և Պայմանագրում նշված կարգով:

Ապահովագրական հատուցում (այսուհետ՝ Հատուցում) - ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ընկերության կողմից ապահովագրության պայմանագրի հիման վրա Ապահովադրին կամ Շահառուին վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով:

Ապահովագրական գումար - Պայմանագրի գործողության ժամանակահատվածի ընթացքում ապահովագրության պայմանագրով նախատեսված Ապահովագրողի պատասխանատվության առավելագույն չափը:

Ապահովագրավճարը – Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար:

2. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1. Սույնով Ապահովագրողը համաձայն է Ապահովագրության պայմանագրում և/կամ Վկայագրում սահմանված կարգով Ապահովադրին հատուցել բոլոր այն գումարները, որոնց վճարման համար Ապահովադիրը կարող է կրել իրավական պատասխանատվություն՝ որպես վնաս (ներառյալ՝ հայցվորի ծախքերը և ծախսերը) մարմնական վնասվածքի կամ հիվանդության, կամ որևէ նյութական ունեցվածքի պատահական կորստի կամ հասցված վնասի առնչությամբ, որը ծագել է Ապահովադրի Ապահովագրության Պայմանագրում նշված Գործունեության հետ կապված և որն առաջացել է Հետադարձ գործողության ամսաթվից հետո և որի կապակցությամբ Ապահովագրության Պայմանագրում նշված Ապահովագրության ժամանակահատվածի ընթացքում առաջին անգամ Ապահովադրի դեմ ներկայացվել է հատուցման պահանջ:

2.2. Սույնով տրամադրված Ապահովագրությունը կիրառվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում կրած մարմնական վնասվածքի կամ հիվանդության, կամ նյութական ունեցվածքի կորստի կամ վնասի համար:

3. ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

3.1. Սույնով Ընկերությունը և Ապահովադիրը համաձայնվում են, որ սույն Ապահովագրական պայմանագրի շրջանակներում տրամադրվող ապահովագրության համար հիմք է հանդիսանում միայն Հայաստանի Հանրապետության Առաջին Ատյանի Դատարանի կողմից Ապահովադրի նկատմամբ կայացրած որոշումը. հատուցման համար հիմք չեն կարող ծառայել այլ մարմինների որոշումները, կամ երկկողմ կամ այլ տեսակի համաձայնագրերի հիման վրա՝ այլ երկրների դատական որոշումների կիրարկման նպատակով վերը նշված դատարանների վճիռները կամ հրամանները:

3.2. Սույն ապահովագրության համար ապահովագրավճարը հաշվարկվում է ըստ ՀՀ օրենսդրության՝ առանց հաշվի առնելու այլ օրենսդրությամբ կամ դատարանների որոշումներով պահանջվող վճարվելիք գումարների չափերը:

4. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Սույն Ապահովագրությունը չի ներառում պատասխանատվություն.

4.1.1. որևէ անձի կողմից կրած մարմնական վնասվածքի կամ հիվանդության համար, որը ծագել է Ապահովադրի մոտ նրա աշխատանքի պատճառով կամ ընթացքում, կամ որևէ անձին հասցրած մարմնական վնասվածքի կամ հիվանդության համար, որը ծագել է Ապահովադրի հետ բացառապես աշխատանքի տրամադրման մասին կնքած պայմանագրի շրջանակներում նրա աշխատանքի կամ մասնակցության պատճառով կամ ընթացքում

4.1.2. Ապահովադրի սեփականությունը հանդիսացող կամ նրա խնամքին, պահառությանը և վերահսկողությանը հանձնված գույքի /ներառյալ կապալառուների և ենթակապալառուների գործարանը և սարքավորումը/ կորստի կամ վնասի համար, բացառությամբ՝

4.1.2.1. աշխատակիցների գույքը

4.1.2.2. գործունեության տարածքը /ներառյալ շենքերն ու շինությունները/, որը չի հանդիսանում Ապահովադրիի սեփականությունը կամ վարձակալված չէ նրա կողմից, այլ ժամանակավորապես զբաղեցվել է աշխատանքներ իրականացնելու նպատակով, սակայն որևիցե հատուցում չի տրամադրվում այդտեղ տեղադրված գույքի կորստի կամ վնասի համար, որի վրա աշխատում է Ապահովադիրը և որը ծագել է այդ աշխատանքի արդյունքում.

4.1.3.

4.1.3.1. Ապահովադրի կողմից կամ անունից մեխանիկական կցասայլի կամ կիսակցասայլի տնօրինման կամ շահագործման պատճառով առաջացած պատասխանատվությունը, որի ապահովագրությունը պահանջվում է օրենսդրորեն, կամ ավտոտրանսպորտի ապահովագրական պայմանագրով սահմանված դեպքերում,

4.1.3.2. Ապահովադրի կողմից, կամ նրա անունից ցանկացած տիպի ջրային, օդային կամ երկաթուղային փոխադրամիջոցի սեփականության կամ շահագործման պատճառով առաջացած պատասխանատվությունը:

4.1.4. վնասների կանխագնահատման, տույժերի և աշխատանքի իրականացման պայմաններից բխող պատասխանատվությունը, եթե ապացուցված չէ, որ այդ պայմանների բացակայության դեպքում նույնպես կառաջանար նման պատասխանատվություն

4.1.5. Ապահովադրի կողմից արտադրված, նախագծված, վաճառված, մատակարարված, վերանորոգված կամ տեղադրված գույքին, կառույցին կամ պայմանագրային աշխատանքներին /ներառյալ դրանցում օգտագործված նյութերին/ պատճառած կորստից կամ վնասից ծագած պատասխանատվությունը՝

4.1.5.1. նախքան Ապահովադրի կողմից դրանց ավարտման հավաստումը կամ հանձնումը,

4.1.5.2. Ապահովադրի կողմից դրանց ավարտի հավաստումից կամ հանձնումից հետո, եթե կորուստը կամ վնասը առաջացել է այդ գույքի, կառույցի կամ պայմանագրային աշխատանքների որևէ մասի թերություններից.

4.1.6. պայմանագրի իրականացման անխուսափելի և անկանխելի հետևանք հանդիսացող պատասխանատվությունը

4.1.7. ստորգետնյա աշխատանքներին հասցված վնասի համար պատասխանատվությունը, եթե Ապահովադիրը՝ նախքան որևէ աշխատանք սկսելը, ստորգետնյա աշխատանքների վայրը պարզելու համար չի կատարել գրավոր հարցում համապատասխան պետական մարմնին և հնարավորության դեպքում չի ստացել գրավոր պատասխան

4.1.8. մթնոլորտի, ջրային կամ ցամաքային տարածքների, կամ այլ նյութական ունեցվածքի աղտոտումից կամ վարակումից առաջացած պատասխանատվությունը

4.1.9. Մասնագիտական Ծառայությունների՝ անվճար կամ այլ կերպ մատուցման ընթացքում Ապահովագրվողի կողմից կամ նրա անունից փաստացի կամ ենթադրաբար գործած զանցանքի, սխալի կամ բացթողման պատճառով ծագած պատասխանատվությունը:

4.2. Սույն բացառության սահմաններում Մասնագիտական Ծառայությունները նշանակում են.

4.2.1. խորհրդատվություն, նախագծում, վերահսկում, ստուգում, փորձարկում, հետազոտում, հսկում, պլանավորում և/կամ ուսումնասիրություն, ինչպես նաև քարտեզների, հատակագծերի, կարծիքների, զեկույցների, գնահատականների, նախահաշվի, աուդիտի, հարցումների, նախագծերի, չափումների, նկարների, աղյուսակների, տվյալների և/կամ բանաձևերի կազմում, հաստատում կամ մեկնաբանում, ինչպես նաև ֆինանսական միջոցների և/կամ ապահովագրության ձեռքբերում, կազմակերպում և/կամ պահպանում

4.2.2. մասնագիտական ծառայությունները, որոնք մատուցվում են համապատասխան որակավորում ունեցող անձանց կողմից, կամ այն աշխատանքները, որոնք սովորաբար իրականացվում են այն մարդկանց կողմից, որոնք ունեն իրավաբանական, նախագծման, ճարտարապետական, ինժեներական, հետազոտական, շինարարության վերահսկման, բնապահպանական իրավիճակի գնահատման կամ աուդիտի, երկրաբանական աշխատանքների և/կամ ծրագրերի կառավարման որակավորում:

5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Սույն Ապահովագրությունը չի ներառում պատասխանատվություն.
5.1.1. այն հատուցման պահանջի համար, որը ծագում է հետևյալի կապակցությամբ.
5.1.1.1. Ապահովադրի անմիջական աշխատակցի կողմից իրականացված ցանկացած տիպի ապամոնտաժման աշխատանքները, բացառությամբ այնպիսի ապամոնտաժման, որը կատարվում է միայն ձեռքի գործիքներով և 5 մետր բարձրությունը չգերազանցող շինությունների վրա, երբ այդպիսի աշխատանքը հանդիսանում է Ապահովադրի կողմից շինությունների փոփոխման կամ վերանորոգման պայմանագրի լրացուցիչ մաս,
5.1.1.2. այնպիսի շինությունների փոփոխությունը կամ վերանորոգումը, ինչպիսիք են կամուրջները, աշտարակները, ուղղահայաց ծխնելույզները, դոմնային վառարանները, վիադուկները կամ հանքերը,
5.1.1.3. հանքափորեր, թունելներ կամ հորատանցքեր փորելը,
5.1.1.4. ցանկացած նպատակներով պայթուցիկ նյութերի օգտագործումը,
5.1.1.5. 3 մետրից խորը հողափորումը,
5.1.1.6. 15 մետրից բարձր աշխատանքների կատարումը,
5.1.1.7. ասբեստի կամ ազբեստ պարունակող նյութի գործածությունը կամ հանքահանումը
5.1.2.
5.1.2.1. որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջանում է պատերազմի, արտաքին թշնամու ներխուժման, թշնամական ուժերի, ռազմական գործողությունների /անկախ այն բանից, պատերազմ հայտարարվել է, թե ոչ/, քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության, խռովության, զինվորական հեղաշրջման, իշխանության բռնազավթման, գույքի բռնագանձման, պետականացման կամ բռնատիրացման հետևանքով կամ ընթացքում,
5.1.2.2. որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հետևանք է՝
ա) միջուկային վառելիքից կամ միջուկային վառելիքի այրումից ծագած իոնացված ճառագայթման կամ ռադիոակտիվ աղտոտման,
բ) ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ այլ վտանգավոր հատկություններ ունեցող պայթուցիկ միջուկային բաղադրիչի:
5.1.3. որն առաջանում է Ապահովադրի կամ նրա մոտ ղեկավար կամ վերահսկիչ պաշտոն զբաղեցնող աշխատակցի կողմից կանխամտածված կամ դիտավորյալ պատճառած մարմնական վնասվածքի, հիվանդության կամ նյութական ունեցվածքի կորստի հետևանքով,
5.1.4. որն առաջացել է նախքան սույն Ապահովագրական պայմանագրի ուժի մետ մտնելը Ապահովադրի կողմից որևէ հանգամանքի կամ դեպքի մասին տեղեկացվածության պատճառով ծագած հատուցման պահանջի հետևանքով:

6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Ընկերությունը կվճարի նաև ՀՀ դատարաններում իրականացված դատական վարույթների հետ կապված ծախսերը՝ նրանց գրավոր համաձայնությամբ՝
6.1.1. սպանությունների և բռնությունների դեպքերի հետաքննության կամ մահացու դժբախտ պատահարների հետաքննության ժամանակ վկա հանդես գալու համար,
6.1.2. պարզեցված կարգով վարույթի դատարանում Ապահովագրության պայմանագրի շրջանակներում հատուցման ենթակա անգործության հետևանքով առաջացած վարույթը պաշտպանելու համար:
6.2. **Տնօրեններին վերաբերող դրույթներ:** Ապահովադրի պահանջով, Ընկերությունը համաձայնում է հատուցել Ապահովադրի Տնօրենին, սակայն միայն այնքանով, որքանով այդ պարտավորությունը ծագում է Տնօրենի համար Ապահովադրի կողմից կամ նրա անունից կատարված աշխատանքից: Նշված Տնօրենը ենթակա է և պետք է հետևի այստեղ սահմանված կարգին և պայմաններին, և սույն դրույթը չի կարող հիմք հանդիսանալ Ապահովագրության պայմանագրում նշված Հատուցման սահմանաչափի մեծացման համար:
6.3. **Չփոխհատուցվող գումարին վերաբերող դրույթ:** Երբ չփոխհատուցվող գումարը նշվում է Պայմանագրում, Ապահովադիրը պատասխանատվություն է կրում ծագող պատահարի պատճառով առաջացած յուրաքանչյուր և ամեն հայցի կամ հայցերի շարքի առաջին գումարի չափով:
6.4. **Համատեղ պատասխանատվության մասին դրույթ:** Սույնով սահմանվում է, որ այն դեպքերում, երբ Ապահովագրության պայմանագրում որպես Ապահովադիր նշված են մեկից ավելի կողմեր, ապա յուրաքանչյուր կողմի համար ծածկույթը կիրառվում է որպես անհատ ապահովագրվածի, եթե Ընկերության ընդհանուր պարտավորությունը չի գերազանցում Ապահովագրության պայմանագրում նշված Հատուցման սահմանաչափը:
6.5. **Հատուցման սահմանաչափը:** Սույն Ապահովագրության շրջանակներում, Ապահովադրի դեմ որևէ սկզբնաղբյուրից բխող մեկ կամ մի շարք դեպքերի կապակցությամբ կամ դրանցից ծագած բոլոր հատուցման պահանջների համար Ընկերության պատասխանատվությունը չպետք է գերազանցի Ապահովագրության պայմանագրում սահմանված Հատուցման սահմանաչափը, սակայն Ընկերությունը՝ Ապահովադրի կողմից որևէ հատուցման պահանջի վիճարկման և վերջինիս կողմից պահանջի և գրավոր համաձայնության դեպքում, կփոխհատուցի նաև դրա հետ կապված բոլոր ծախսերը և վճարները, հաշվի առնելով հետևյալ պայմանը.
6.5.1. Եթե հատուցման պահանջի բավարարման նպատակով անհրաժեշտ է կատարել Ապահովագրության պայմանագրում սահմանված Հատուցման սահմանաչափը գերազանցող վճար, ապա դրա հետ կապված բոլոր ծախսերի և վճարների փոխհատուցման Ապահովագրողների պատասխանատվությունը պետք է սահմանափակվի հատուցման պահանջի բավարարման համար Հատուցման սահմանաչափով թույլատրված գումարի չափով:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

7.1. Նախնական պայման է հանդիսանում այն, որ եթե այս ապահովագրության ապահովագրավճարներից որևէ մեկը հաշվարկվել է Ապահովադրի կողմից ներկայացված գնահատականների համաձայն, Ապահովադիրը պետք է զգուշությամբ պահպանի դրանց առնչվող բոլոր տվյալներն ու Ընկերությանը մշտապես թույլատրի զննել դրանք:

7.2. Ապահովադիրը պետք է Ապահովագրության յուրաքանչյուր Շրջանի ավարտից հետո երեք ամսվա ընթացքում ներկայացնի տվյալներն Ընկերությանը, և այդ շրջանի համար ապահովագրվճարը կհաշվարկվի համաձայն այդ տվյալների, և Ապահովադրի կողմից վճարված կամ նրան թույլատրված տարբերությունը՝ համաձայն դեպքի, կհաշվարկվի ըստ պահանջվող նվազագույն ապահովագրական պարգևի չափի:

7.3. Ընկերությունն իրավունք ունի Ապահովադրից պահանջելու նման հաշվարկներ պարունակող աուդիտորական հավաստագիր, որոնք կարգավորվում են համապատասխան այս պայմանագրի: Նման հաշվարկը պետք է ընդգրկի աշխատակիցներին վճարված բոլոր պարգևատրումները և ոչ վարձու աշխատողներին կամ միայն աշխատանքի բաժնի աշխատակիցներին, ենթակապալառուներին, ում համար կրվում է պատասխանատվություն, կամ նման այլ հիմքով՝ ըստ համաձայնության, տրված վճարումները:

8. ՀԱՅՑԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

8.1. Ապահովագրական պատահարի դեպքում Ապահովադիրը պետք է պատահարի մասին **ԱՆՀԱՊԱՂ** հայտնել **ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆԸ:**

8.2. Ապահովագրական պատահար տեղի ունենալուց **ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ** (լիազորված վարորդը, Շահառուն) պետք է **ԱՆՀԱՊԱՂ,** սակայն **ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 48 ԺԱՄՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ** տեղյակ պահի Ապահովագրողին:

8.3. Պատահարի ի հայտ գալու օրվանից **2 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ** Ապահովադիրը պետք է ներկայացնի հայցային դիմումը:

8.4. Բոլոր հայցերի ծանուցագրերը կամ ընթացքի վերաբերյալ գրավոր տեղեկություններն ու այլ փաստաթղթերը ձեռքբերումից անմիջապես հետո պետք է ուղարկվեն Ընկերությանը:

8.5. Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել բոլոր հավելյալ տեղեկությունները, որոնք կպահանջի Ընկերությունը

8.6. Ապահովագրական հայցին կից ներկայացվող հիմնական փաստաթղթերն են՝

8.6.1. Պետական իրավասու մարմնի կողմից տրված դեպքի մասին արձանագրությունը/եզրակացությունը/տեղեկանքը (առկայության դեպքում),

8.6.2. Վնասի չափը հավաստող փորձագետի եզրակացությունը (առկայության դեպքում),

8.6.3. ՀՀ Օրենսդրությամբ նախատեսված և Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր:

8.7. Ապահովադրի կողմից ներկայացրած յուրաքանչյուր հայցին կից ներկայացվող փաստաթղթի վրա Ապահովագրողը գրառում է կատարում ստացման ամսաթվի մասին:

8.8. Ընդունման առաջարկի խոստում կամ վճարում տեղի չի ունենա և չի տրվի Ապահովադրի կողմից կամ անունից՝ առանց Ընկերության գրավոր համաձայնագրի, ով լիազորված կլինի ընդունել և գործել Ապահովադրի անունից որևէ հայցի դեմ պաշտպանություն կազմակերպելու կամ հայցի հաստատման հետ կապված, կամ գործել Ապահովադրի անունից՝ պատասխանատվության կամ վնասի կամ որևէ այլ պատճառով որևէ հայցում իր սեփական շահույթի հարցերով և կունենա ցանկացած հայցի հաստատման և ցանկացած ընթացակարգում մասնակցելու լիակատար իրավասություն, և Ապահովագրվողը կտրամադրի նման ամբողջ ինֆորմացիան, որն Ընկերությունը կպահանջի ողջամտորեն:

8.9. Ապահովագրողին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու օրվանից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում Ապահովագրողը որոշում է ընդունում հայցի պահանջի բավարարման կամ մերժման մասին:

8.10. Հայցի պահանջի բավարարման դեպքում Հատուցման վճարումը կատարվում է հայցի կարգավորման վերաբերյալ որոշման ընդունման պահից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

8.11. Հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադրին (Շահառուին) Պայմանագրում նշված հասցեով:

9. ՌԻՍԿԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ

9.1. Պատասխանատվության ենթակա պայման է հանդիսանում այն, որ Ապահովադիրը պետք է Ընկերությանը տեղեկացնի ռիսկի փոփոխությունների կամ որևէ էական փաստի մասին, որոնք նրան հայտնի կդառնան կամ կծագեն այս պայմանագրի գործողության ժամկետում:

10. ԿԵՂԾ ՀԱՅՑ

10.1. Եթե Ապահովադիրը կունենա որևէ հայց և կիմանա, որ այն կեղծ է կամ խեղաթյուրված՝ գումարի չափի կամ որևէ այլ առումով, այս Ապահովագրությունը կդառնա անգործադրելի, և հետագա բոլոր հայցերը կմերժվեն:

11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

11.1. Ապահովագրության Պայմանագրի գործողությունը վաղաժամկետ կարող է դադարել

11.1.1. Ապահովադրի նախաձեռնությամբ՝ այդ մասին **ՈՉ ՊԱԿԱՍ, ՔԱՆ 15 ՕՐ ԱՌԱՋ** ծանուցելով Ապահովագրողին: Այս դեպքում Ապահովագրողը Ապահովադրին վերադարձնում է չլրացած օրերի համար ապահովագրավճարը համաձայն հետևյալ բանաձևի.

$$Ա_վ = (Ա_պ - Հ_կ)*Պ_չ/Պ-5000 ՀՀ դրամ$$

$Ա_վ$ - Ապահովադրին վերադարձման ենթակա ապահովագրավճար
$Ա_պ$ - Պայմանագրով սահմանված ապահովագրավճար
$Հ_կ$ - Ապահովադրին կատարած հատուցումների գումար
$Պ_չ$ - Պայմանագրի չլրացած օրերի քանակ
Պ – Պայմանագրով սահմանված գործողության օրերի քանակը
5000 ՀՀ դրամ - գործավարման ծախսեր

11.1.2. և՝ Ապահովագրողի, և՝ Ապահովադրի նախաձեռնությամբ, եթե մյուս կողմը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում՝ խախտումը հայտնաբերելուց եռամսյա ժամկետում: Ապահովադրի կողմից Պայմանագրի խախտման համար Ապահովագրողի նախաձեռնությամբ Պայմանագրի լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները:
11.1.3. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

12. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔ)

12.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին (Ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի չափով:
12.2. Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի (Ապահովագրված անձի, շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահմպանմամբ:
12.3. Ապահովադիրը (ապահովագրված անձը, շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:
12.4. Եթե Ապահովադիրը (ապահովագրված անձը, շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամաբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (ապահովագրված անձի, շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավել վճարված հատուցման գումարը:

13. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

13.1. Պայմանագրում փոփոխություններ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:
13.2. Պայմանագրից և սույն Պայմաններից ծագող բոլոր տարաձայնությունները ենթակա են լուծման Պայմանագրում նշված և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
13.3. Սույն ապահովագրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ: